ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

(1970-ական թվականների վերջ 1980-ականի սկիզբ)

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ. Գ.

1950-1970 թթ. Եգիպտոսն արաբական աշխարհի առաջատար պետությունն էր: Այն բացառիկ դեր էր կատարում նաև Իսրայելին հակազդող արաբական երկրների քաղաքականության իրականացման գործում:

1970 թ. սեպտեմբերին Եգիպտոսի վախճանված նախագահ Գամալ Աբդել Նասերին փոխարինած Մուհամեդ Անվար Սադաթը սկսեց վերանայել երկրի արտաքին քաղաքական ուղղվածությունը*: 1973 թ. արաբա-իսրայելյան չորրորդ պատերազմից հետո Եգիպտոսը Իսրայելի հետ երկխոսություն սկսելու միտում դրսևորեց: 1978 թ. սեպտեմբերին Սադաթը ստորագրեց Քեմփ-Դևիդի համաձայնագիրը, ապա մի քանի ամիս անց՝) 1979 թ. մարտին, նաև եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագիրը[1], որով Եգիպտոսը դուրս եկավ Իսրայելին հակազդող արաբական երկրների ճակատից**:

Եգիպտոսի անջատողական քաղաքականությունը բացասական արձագանք ունեցավ արաբական աշխարհում: Այն հայտնվեց որոշակի մեկուսացման մեջ: Պատմագիտության մեջ եգիպտա-իսրայելյան համաձայնության եզրեր գտնելու սկիզբն ընդունված է համարել 1977 թ. նոյեմբերի 19-ը, երբ Սադաթը այցելեց Երուսաղեմ[2]: Այդ շրջանից էլ, ըստ էության, սկսվում են Եգիպտոսի անջատողական քաղաքականության դեմ ուղղված արաբական երկրների նախաձեռնությունները:

---

* 1967թ. արաբա-իսրայելյան երրորդ պատերազմի հետևանքով Եգիպտոսը զգալի մարդկային և տնտեսական կորուստներ ունեցավ: Իսրայելի կողմից Սինայի թերակղզու գրավման հետևանքով Եգիպտոսը զրկվեց թերակղզու նավթահանքերի շահագործման հնարավորությունից: Դադարեցվել էր Սուեզի ջրանցքի շահագործումը (***Беляев И., Примаков И.,*** *Египет: Время президента Насера, М., 1981, с. 296):*

[1] Քեմփ-Դևիդի համաձայնագիրը և Եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագիրը տե՛ս A Framework for Peace in the Middle East Agreed at Camp David. Office of the White House Press Secretary, Sept., 18, 1978, p. 7 ¨ United States Policy Statement Series, 1979, The Egyption-Israeli Peace Treety. – The White House, Monday, march 26, 1979.

** 1948թ. մայիսին Իսրայել պետության ստեղծման հետևանքով սկիզբ առած արաբա-իսրայելյան հակամարտության ընթացքում Եգիպտոսը գլխավորում էր արաբական երկրների հակաիսրայելյան պայքարը: Հանդես գալով Իսրայելի դեմ ուղղված արաբական երկրների ցանկացած նախաձեռնության պաշտպանությամբ՝ Եգիպտոսը միևնույն ժամանակ զգալի վնասներ էր կրում: Սադաթի նախաձեռնությամբ արաբա-իսրայելյան հակամարտությունից Եգիպտոսի դուրս բերելը նրա կողմից պատճառաբանվում էր նաև վերոնշյալ հանգամանքով:

[2] ***Князев А,*** *Египет после Насера, 1970-1981, М., 1986, с. 191,* EL-**Sadat A.,** In Search of Indentity, L., 1978, p. 302, **Cohen R.,** Culture and Conflict in Egyption-Israeli Relations: A Dialog of Deaf, Wash., 1990, p. 37 (Զիյարաթ աս-Սադաթ լի Իսրաիլ□, Վասաիկ ուա թաալիկաթ Իսրաիլիա, Բեյրութ, 1978, էջ 23):

Սադաթի՝ Երուսաղեմ այցը դատապարտելու և նրա հետագա անջատողական գործողությունները կանխարգելու նպատակով 1977 թ. դեկտեմբերի 2-5-ը Տրիպոլիում (Լիբիա), Լիբիայի նախագահ Մուամար Կադդաֆիի նախաձեռնությամբ կայացավ արաբական մի խումբ երկրների հանդիպում[3]: Հանդիպման մասնակից երկրներից Սիրիան, Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետությունը (ԵԺԴՀ), Լիբիան, Ալժիրը և Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը (ՊԱԿ) ներկայացված էին նախագահների մակարդակով[4]: Վերոնշյալ երկրների և Իրաքի ներկայացուցչի նախաձեռնությամբ Եգիպտոսին դատապարտող մի շարք առաջարկություններ արվեցին, որոնց հետ, սակայն, չէին համաձայնում առավել արևմտամետ կողմնորոշում ունեցող և Եգիպտոսի դերը կարևորող երկրները: Մարոկկոն, Թունիսը, Սուդանը, Հորդանանը, Սոմալին և Պարսից ծոցի միապետական իշխանությունները Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ դեմ դուրս եկան Եգիպտոսի նկատմամբ խիստ պատժամիջոցների որոշում ընդունելուն[5]: Չկարողանալով Եգիպտոսին դատապարտող համաարաբական որոշումներ ընդունել՝ Սիրիայի և ՊԱԿ-ի նախաձեռնությամբ Սադաթի անջատողական քաղաքականությանը, սիոնիզմին և կայսերապաշտական քաղաքականությանը խոչընդոտելու նպատակով հիմնվեց «Տոկունության և հակազդեցության ազգային ճակատը» (ՏՀԱՃ), որի մեջ միավորվեցին Սիրիան, ՊԱԿ-ը, Լիբիան, Ալժիրը և ԵԺԴՀ-ն[6]: Պետք է նշել, որ 1970-ական թվականներին արաբական երկրներում սոցիալ-դասակարգային բևեռացումն ավելի ակնհայտ էր դարձել: Սադաթի նախաձեռնության հանդեպ ՏՀԱՃ-ի անդամ երկրների դիրքորոշումը հասկանալու համար հարկավոր է փաստել, որ այդ երկրներում հասարակության հակահիսրայելյան անհանդուրժողականությունն առավել արմատական բնույթ էր կրում: Սիրիա-իրաքյան հակասությունների հետևանքով Իրաքը հրաժարվեց անդամակցել այդ միությանը, թեպետ և եռանդուն գործունեություն էր ծավալել Եգիպտոսի դեմ խիստ պատժամիջոցներ ընդունելու գործում [7]: ՏՀԱՃ-ի անդամ երկրները որոշեցին դադարեցնել Եգիպտոսի հետ դիվանագիտական հարաբերությունները և այլ կարգի շփումները, ինչպես միջարաբական, այնպես էլ միջազգային ատյաններում, պահանջել արաբական երկրների հետագա հանդիպումներին սառեցնել Եգիպտոսի անդամակցությունը Արաբական պետությունների լիգայում (ԱՊԼ) և նրա գրասենյակը Կահիրեից տեղափոխել այլ երկիր:

ՏՀԱՃ-ի անդամ երկրները[8] կոչ էին անում դատապարտել եգիպտական այն կազմակերպություններին և անձանց, ովքեր որոշակի հարաբերությունների մեջ էին

---

[3] Statement of the Tripoli Summit Conference JPS, N 27, Vol VII, Spring 1978, p. 186-188,**Jiryis S.,**The Arab World of the Crossroads: The Opposition to Sadat ¥-JPS, N 26, vol VII, Winter, 1978, p. 32-33).

[4] Ալ-Ջիհադ, Տրիպոլի 7.XII.1977:

[5] *ТАСС Атлас, N 48 (1065), 2.XII.1977.* Օրինակ, Մարոկկոն և Թունիսը ընդհանրապես չէին առարկում Իսրայելի հետ համաձայնության գալու գաղափարին:

[6] *ТАСС Атлас, N 50(1067), 16.XII.1977.* ***Կարամանուկյան Շ. Լ.,*** Արաբական պետությունների լիգայի դերը արաբական երկրների հակահմպերիալիստական պայքարում, Ե., 1988, էջ 165:

[7] ***Иванов С.,*** *Межарабская политика Сирии, т. 1, М., 1986, с. 159.*

[8] Statement of the Tripoli, նշվ. փաստաթղթի մեջ:

Իսրայելի հետ: Միևնույն ժամանակ, նրանք ողջունում էին Եգիպտոսի արաբ ժողովրդին և նրա առաջադեմ ուժերին[9]: ՏՀԱՃ-ում մուտքը բաց էր ցանկացած արաբական երկրի համար: Գագաթնաժողովից հետո, 1977 թ. դեկտեմբերի 6-ին Տրիպոլիում հիմնվեց նաև Համաարաբական կոնգրեսը, որի անդամ դարձան շուրջ 210 արաբական քաղաքական, հասարակական կազմակերպությունների և ազատագրական շարժումների ներկայացուցիչներ՝ 17 արաբական երկրներից:

Համաարաբական կոնգրեսի նպատակն էր խոչընդոտել Մերձավոր արևելքում անջատողական համաձայնագրերի քաղաքականությանը[10]: Չսպասելով արաբական երկրների՝ Տրիպոլիի հանդիպման որոշումների իրականացմանը՝ 1977 թ. դեկտեմբերի 5-ին Սադաթը խզեց դիվանագիտական հարաբերությունները ՏՀԱՃ-ի անդամ երկրների հետ[11]: Եգիպտոսի հետ իրենց դիվանագիտական կապերի խզման մասին հայտարարեցին նաև ՏՀԱՃ-ի անդամ երկրները[12]:

1978 թ. փետրվարի 2-3-ը Ալժիրում տեղի ունեցավ ՏՀԱՃ-ի անդամ երկրների երկրորդ հանդիպումը, որտեղ դարձյալ դատապարտվեց Սադաթի անջատողական քաղաքականությունը[13]: Ի տարբերություն ՏՀԱՃ-ի անդամ երկրների, արաբական երկրներից մի քանիսը, կարևորելով Եգիպտոսի քաղաքական տեղն ու դերն արաբական աշխարհում, ոչ միայն պահպանում էին նրա հետ բազմակողմանի հարաբերությունները, այլ նաև շարունակում էին նրան օգնություն տրամադրել: Սաուդյան Արաբիան Եգիպտոսին չէր դադարեցրել օգնություն ցույց տալ ոչ միայն «Իսրայելի հետ հակամարտության մեջ գտնվող երկրներին օգնության» հիմնադրամի ծրագրով, այլ նաև «Եգիպտոսին Պարսից ծոցի երկրների օգնության» հիմնադրամի շրջանակներում[14]: Փաստորեն Եգիպտոսի դեմ պատժամիջոցները Ծոցի միապետությունների կողմից ամենևին էլ չէին իրականացվում:

1978 թ. սեպտեմբերի 20-23-ը Դամասկոսում կայացավ ՏՀԱՃ-ի անդամ երկրների երրորդ խորհրդաժողովը, որի մասնակիցներն Արաբական երկրներից պահանջեցին դատապարտել Եգիպտոսին և միանալ ՏՀԱՃ-ի անդամ երկրների կողմից իրականացվող պատժամիջոցներին[15]: Մասնակից պետությունները ևս մեկ անգամ

---

[9] Ալ-Ջիհադ, Տրիպոլի 7.XII.1977: Դատապարտելով Սադաթի Երուսաղեմ այցելությունը՝ Եգիպտոսի վարչապետի տեղակալ և արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ֆահմին հրաժարական տվեց, իսկ նրա տեղը հրաժարվեց զբաղեցնել նաև Մահմուդ Ռիադը (***Герасимов О., Князев А.,*** *Египет: 10 лет после Насера, М., 1990, с. 42).*

[10] *Международная жизнь, 1981, N 5, с. 68,* ***Захаров А . , Фомин О.,*** *Кемп-Дэвид. Политика, обреченная на провал, М., 1982, с. 74.*

[11] ***Моджорян Л.,*** *Сионизм как форма расизма и расовой дискриминации, М., 1979, с. 206,* ***Հովհաննիսյան Ս.,*** ԱՄՆ-ի քաղաքականությունը Իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ, Ե., 2001, էջ 23:

[12] *Арабский мир: три десятилетия независимого развития, М., 1990, с. 308.*

[13] Final Communique of the Third Summit Conference of the Arab Front for Steadfastness and Confrontation in Damascus (JPS 23.IX.1978, N 30, Vol. VIII, Winter, 1979, p. 184-187).

[14] ***Валькова Л.,*** *Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987, с. 212.* Այս ֆոնդը հիմնվել էր 1976թ. օգոստոսին: Պարսից ծոցի երկրների ներդրած գումարը կազմել էր 2 մլրդ դոլար:

[15] Ալ-Բաաս, Դամասկոս, 24.IX.1978. *Правда, 06.X.1978.*

հայտարարեցին Սադաթի անջատողական քաղաքականությանը դիմակայելու պատրաստակամության մասին:

Քեմփդևիդյան համաձայնագրի քննարկման նպատակով, Իրաքի նախագահ ալ-Բաքրի նախաձեռնությամբ, 1978 թ. նոյեմբերի 2-5-ը Բաղդադում հավաքվեցին արաբական բոլոր երկրների ներկայացուցիչները և ՊԱԿ-ը, բացի Եգիպտոսից, Սուդանից, Սոմալիից և Օմանից[16]: Հանդիպման մասնակից տասը երկրներ՝ Իրաքը, Սիրիան, ԵԺԴՀ-ն, Հորդանանը, Քուվեյթը, Լիբանանը, Արաբական Միացյալ Էմիրությունները (ԱՄԷ), Կատարը, Բահրեյնը, Մավրիտանիան և ՊԱԿ-ը ներկայացված էին նախագահների մակարդակով[17]: ՏՀԱՃ-ի անդամ երկրները դարձյալ կոչ էին անում խստորեն դատապարտել Սադաթին և կյանքի կոչել Տրիպոլիի 1977 թ. հանդիպմանը ձեռք բերված որոշումները[18]: Արաբական բոլոր երկրները դատապարտեցին Սադաթի անջատողական ուղեգիծը, սակայն պատժամիջոցներին միանալու հարցում Սաուդյան Արաբիան և Պարսից ծոցի մնացած միապետական իշխանությունները բացասական դիրքորոշում ունեին: Գագաթնաժողովի մասնակիցները Եգիպտոսի հանդեպ պատ-ժամիջոցների ընդունման հարցում չէին կարողանում ընդհանուր հայտարարի գալ[19]: Ծոցի միապետությունները, նպատակ ունենալով Սադաթին հետ պահել Իսրայելի հետ համաձայնության գալու հետագա քայլից, 1978թ. նոյեմբերի 6-ին նրա հետ բանակցելու գործուղեցին Լիբանանի վարչապետ Սալիմ Հոսսին[20]: Սակայն Սադաթը հրաժարվեց ընդունել նրան, և Հոսսը մի քանի ժամ օդանավակայանում անցկացնելուց հետո վերադարձավ Բաղդադ[21]: Հոսսի առաքելության ձախողումից հետո Սադաթին Իսրայելի հետ համաձայնության գալուց հետ պահելու նպատակով Սաուդյան Արաբիան և Պարսից ծոցի միապետությունները ևս մեկ քայլ ձեռնարկեցին: Նրանք Եգիպտոսին առաջարկեցին 5 մլրդ դոլար օգնություն, եթե վերջինս հրաժարվեր քեմփդևիդյան համաձայնագրից[22]: Ի վերջո, գագաթնաժողովի մասնակից արաբական երկրներն իրենց եզրափակիչ հռչակագրում որոշեցին «միաձայն կյանքի կոչել Տրիպոլիում մշակված պատժամիջոցները», եթե Սադաթը Իսրայելի հետ ստորագրի քեմփդևիդյան համաձայնագրով նախատեսվող Եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագիրը[23]: Բաղդադի հանդիպման հակաեգիպտական որոշումների դեմ ակտիվորեն պայքարում էին Պարսից ծոցի միապետությունները Սաուդյան Արաբիայի

---

[16] ***Караманукян Ш. Л.,*** *Место арабской лиги в международных отношениях (Проблемы современной арабистики, Е., 1988, с. 253).*

[17] *Внешняя политика стран Ближнего и Среднего Востока, М., 1984, с. 242.*

[18] Le Figaro, 13.XII.1978, Ըստ ***Горбатов О., Черкасский Л.,*** *Борьба СССР за обеспечение прочного и справедливого мира на Ближнем Востоке, М., 1980, с. 222.*

[19] ***Севастьянов Г. Е.,*** *Американский экспансионизм, М., 1986, с. 543.*

[20] Ալ-Քաբաս, Քուվեյթ, 11.VI.1978.

[21] Ալ-Շահաբ, Ամման, 29.VI.1978: Աս-Սաֆիր, Ամման, 6.XI.1978:

[22] ***Зверева Л.,*** *Некоторые итоги экономического бойкота Египта арабскими странами (Народы Азии и Африки, М., 1981, N 4, с. 110).*

[23] Ալ-Իրաք, Բաղդադ, 6.XI.1978:

գլխավորությամբ, ինչպես նաև Հորդանանը, Մարոկկոն և Եմենի Արաբական Հանրապետությունը[24]:

Ընտրելով Իսրայելի հետ համաձայնության գալու ճանապարհը, 1979 թ. մարտի 26-ին Սադաթը Վաշինգտոնում ստորագրեց Եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագիրը: Պայմանագրի ստորագրման հաջորդ օրը, մարտի 27-ին, համաձայն Բաղդադում նոյեմբերին կայացած հանդիպման որոշումների, դարձյալ Բաղդադում տեղի ունեցավ արաբական երկրների արտաքին գործերի, նավթային նախարարությունների և տնտեսական կառույցների նախարարների հանդիպում[25]: Հանդիպմանը ներկա էին արաբական բոլոր երկրները և ՊԱԿ-ը, բացակայում էր միայն Եգիպտոսը: Հանդիպման մասնակից արաբական երկրները որոշեցին.

ա) Դադարեցնել Եգիպտոսի անդամակցությունը Արաբական պե-տությունների լիգայում և նրա բոլոր մասնագիտացված կառույցներում: Կազմակերպության նստավայրը Կահիրեից տեղափոխել Թունիս: ԱՊԼ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնին, եգիպտացի Մահմուդ Ռիադին փոխարինել թունիսցի Շազլի Քլիբիով:

բ) Դադարեցնել եգիպտական կառավարությանը ֆինանսական և տեխնիկական օգնության տրամադրումը, տարբեր տեսակի վարկերի և պարտատոմսերի հատկացումը՝ ինպես պետական, այնպես էլ միջարաբական հիմնադրամի ծրագրերով: Արաբական երկրները հրաժարվում էին եգիպտական կառավարության կողմից տարբեր տեսակի թողարկվող արժեթղթեր ձեռք բերել:

գ) Սառեցվում էր Եգիպտոսի անդամակցությունը Նավթ արտահանող արաբական երկրների կազմակերպությանը (ՆԱԱԵԿ): Արաբական երկրները հրաժարվում էին Սադաթի կառավարությանը նավթ և նավթամթերք մատակարարելուց: Այս որոշմանը միանում էր նաև Իրանը: Նավթ տեղափոխող արաբական երկրներին արգելվում էր եգիպտական նավթ տեղափոխել:

դ) Արաբական երկրները դադարեցնում էին օդային հաղորդակցությունը Եգիպտոսի հետ և հետ էին կանչում այնտեղ աշխատող իրենց ազգային ավիաընկերությունները[26]:

Արաբական բոլոր երկրները, բացի Օմանից, Սուդանից և Սոմալիից, միացան այս որոշումներին և 1979 թ. ապրիլ-մայիսի ընթացքում խզեցին Եգիպտոսի հետ դիվանագիտական հարաբերությունները[27]:

1979 թ. մայիսի 8-12-ը Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) անդամ երկրների հանդիպմանը որոշվեց սառեցնել Եգիպտոսի անդամակցությունն այդ կազմակերպությանը[28]: Եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագիրը դատապարտեց նաև 1979 թ. օգոստոսին Հավանայում չմիացած երկրների շարժման VI կոնֆերանսը: Ներկա 95 երկրներից 89-ը Սադաթին մեղադրեցին հակաարաբական քաղաքականության իրականացման մեջ:

---

[24] ***Валькова Л.,*** նշվ. աշխ., էջ 147:

[25] Նույն տեղում, էջ 149-150:

[26] ***Зверева Л.,*** նշվ. աշխ., էջ 111., ***Захаров А., Фомин О.,*** նշվ. աշխ., էջ 130:

[27] *Новейшая история арабских стран Азии, М., 1989, с. 345.*

[28] Le Monde, 14.V.1979.

Հատկանշականն այն է, որ եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագիրը անմիջականորեն շոշափում էր Սաուդյան Արաբիայի շահերը: Դեռ 1954 թ. Էր-Ռիադը Իսրայելի շրջափակումն ամրապնդելու նպատակով Եգիպտոսին էր տրամադրել Աքաբայի ծոցում իրեն պատկանող Սանաֆիր և Տիրան կղզիները: Քեմփ-Դևիդի համաձայնագրի ստորագրումից հետո Եգիպտոսը պետք է այդ կղզիները վերադարձներ Սաուդյան Արաբիային, բայց դրա փոխարեն հանձնել էր Իսրայելին[29]: Այն, որ Եգիպտոսի դեմ ուղղված արաբական երկրների պատժամիջոցները մասնակիորեն էին իրականացվում, վկայում է նաև այն փաստը, որ 1979 թ. ապրիլին Քուվեյթում ՆԱԱԵԿ-ի անդամ երկրների հանդիպմանը չընդունվեց Իրաքի, Սիրիայի, Ալժիրի և Լիբիայի առաջարկը եգիպտական բոյկոտը տարածելու Սուեզի ջրանցքի և Սուեզ-Ալեքսանդրիա (Սումեդ) նավթամուղի վրա[30]: Դրա հետևանքով, 1978թ. Սուեզի ջրանցքի շահագործումից ստացվող 520 մլն դոլարը, որի մի մասն արաբական երկրների վճարումներն էին, 1980թ. կազմում էր 660 մլն դոլար[31]: Սաուդյան Արաբիան շարունակում էր Եգիպտոսի հետ պահպանել օդային կապը, չէր արտաքսել իր երկրում աշխատող եգիպտացիներին, եգիպտական բանկերից հետ չէր վերցրել 1 մլրդ դոլարի հասնող իր ավուարները, իր քաղաքացիներին չէր արգելում անշարժ գույք ձեռք բերել Եգիպտոսում և իրենց գումարները ներդնել եգիպտական տնտեսության մեջ[32]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եգիպտոսի տնտեսությունը զգալի կախվածություն ուներ արաբական երկրներում աշխատող եգիպտացիների գումարային փոխանցումներից, Պարսից ծոցի միապետությունները հետամուտ էին, որ համաարաբական պատժամիջոցները չտարածվեն եգիպտական աշխատուժի վրա[33]: Արաբական աշխարհում արաբական երկրներից ներգրավված աշխատուժի շարքում Եգիպտոսը զբաղեցնում էր առաջին տեղը[34]: 1978 թ. Լիբիայում և Պարսից ծոցի միապետություններում 1,5-2 մլն եգիպտական աշխատուժի՝ հայրենիք փոխանցած գումարը կազմել էր 1,7 մլրդ դոլար[35]: Արդարացի լինելու համար նշենք, որ ՏՀԱՃ-ի անդամ երկրները ևս չէին ցանկանում, որ Եգիպտոսի դեմ ուղղված պատժամիջոցները տարածվեն եգիպտական աշխատուժի վրա: Արաբական երկրները դա բացատրում էին նրանով, որ եգիպտական ժողովուրդը չպետք է տուժեր Սադաթի անջատողական քաղաքականության հետևանքով:

Նպատակ ունենալով խստացնել Եգիպտոսի մեկուսացումն արաբական աշխարհում, 1980թ. ապրիլի 12-15-ը Տրիպոլիում կայացավ ՏՀԱՃ-ի անդամ երկրների չորրորդ հանդիպումը: Դրա մասնակիցները որոշեցին Եգիպտոսի հանդեպ կիրառել

---

[29] ORBIS. A Journal of World Affairs, Philadelphia, 1981, Spring, Cap. 25, N 1, p. 110.

[30] Middle East Economic Dijest, May, N 22, 30.V.1979, p. 24. Սումեդ նավթամուղով անցնող նավթի 80%-ը պատկանում էր Սաուդյան Արաբիային:

[31] *Судьбы социалистической ориентации в арабском мире, М., 1983, с. 766.* Horizont. Berlin, 1981, N 23, S. 23.

[32] ***Валькова Л.,*** նշվ. աշխ., էջ 213:

[33] *Судьбы социалистической ориентации… с. 765.*

[34] Global Trends in Migration: Theory and Research on International Population Movements, N.Y., 1983, p. 260-262.

[35] The Financial Times, L. 30.VII.1979.

ԱՊԼ-ի կողմից Իսրայելի հետ համագործակցող երկրների հանդեպ սահմանված պատժամիջոցները, որոնք նախատեսում էին առևտրական և տնտեսական հարաբերությունների դադարեցում[36]: Էր-Ռիադը շարունակում էր ֆինանսական օգնություն ցույց տալ Սուդանին՝ հաշվի առնելով այդ երկրի կարևորությունը Եգիպտոսի համար և անտեսելով այն հանգամանքը, որ Խարթումը չէր միացել Եգիպտոսի մեկուսացմանն ուղղված համաարաբական որոշումներին [37]:

Սադաթի քաղաքականությանը դիմակայելու նպատակով 1980 թ. մարտի 28-ին Դամասկոսում Եգիպտոսի զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Սաադ ադ-Դին Շազլին հիմնեց «Եգիպտական հայրենասիրական ճակատը», որը միավորում էր նասերականների և եգիպտական իշխանության ընդդիմությանը: Ճակատի նպատակն էր «Սադաթի վարչակարգի տապալումն ու նրա փոխարինումը հեղափոխական ու ժողովրդավար վարչակարգով»[38]: Եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագրի մեկ տարին լրանալու կապակցությամբ եգիպտական ընդդիմության հարյուր առավել ակնառու գործիչներ հրապարակեցին այսպես կոչված «Հարյուրի հռչակագիրը», որով 1981 թվականը հայտարարվել էր Սադաթին ընդդիմադիր ուժերի դիմադրության և միասնության տարի[39]: Այսպիսով, արաբական պահպանողական վարչակարգ ունեցող երկրները ոչ միայն որոշակի զսպվածություն էին ցուցաբերում Սադաթի կառավարության հանդեպ պատժամիջոցներ կիրառելու հարցում, այլև նույնիսկ ճանապարհներ էին փնտրում դրանք շրջանցելու համար: Կորցնելով արաբական երկրների կողմից տրամադրվող զգալի չափերի հասնող ֆինանսական օգնությունը՝ Սադաթը իր երկիրը ֆինանսավորելու աղբյուրներ ձեռք բերեց Արևմուտքում:

1977 թ. ԱՄՆ-ի կողմից Եգիպտոսին տրամադրվող օգնությունը գերազանցեց նման ծրագրով աֆրիկյան և Լատինական Ամերիկայի երկրներին տրամադրվող օգնության չափը[40]: Քեմփ-Դեհիդի համաձայնագրի ստորագրումից հետո, ԱՄՆ-ը Եգիպտոսին տարեկան սկսեց տրամադրել 1,3 մլրդ դոլար[41]: Տնտեսական մեկուսացումը Եգիպտոսը կարողացավ ամբողջովին փոխհատուցել ամերիկյան օգնությամբ:

Արաբական աշխարհում Եգիպտոսի քաղաքական մեկուսացումը ճեղքվեց 1980 թ. սեպտեմբերի վերջին: 1980 թ. սեպտեմբերին սկսված Իրաք-իրանյան պատերազմը Իրաքին ստիպեց ռազմական օգնության խնդրանքով դիմել Եգիպտոսին[42]: Արդեն 1980 թ. վերջին Եգիպտոսի և Իրաքի միջև վերականգնվեցին օդային կապը և միջպետական շփումները[43]: Իրաք-իրանյան պատերազմը կտրուկ փոխեց ուժերի հարաբերակ-

---

[36] ***Зверева Л.,*** նշվ. աշխ., էջ 111:

[37] ***Quandt W.,*** Saudi Arabia in the 1980-s, Wash., p. 28.

[38] ***Սարաջյան Պ.,*** Արաբական Արևելքի կոմունիստական կուսակցությունների և առաջադիմական ուժերի պայքարը դեմոկրատիայի և սոցիալ-տնտեսական վերափոխությունների համար, Ե., 1986, էջ 168-169, *ТАСС Атлас, N 14 (1187), 04.IV.1980.*

[39] Ալ-Վաթան, Կահիրե, 7.III.1981:

[40] ***Baker R.*** *Egypt's,* Uncertain Revolution under Nasser and Sadat, L., 1978, p. 140.

[41] http// www.ariga.com.

[42] *ТАСС Атлас, N 25 (1187), 18.VI.1982.*

[43] *ТАСС Атлас, N 64 (1607), 20.VIII.1987.*

ցությունը արաբական աշխարհում: Պատերազմի հանդեպ դիրքորոշման հարցում ՏՀԱՃ-ի անդամ երկրների շարքերում հակասություններ առաջացան: Իրաքին տրամադրված սպառազինությունները և մասնագիտական օգնությունը նպաստեցին Եգիպտոսի մեկուսացման վերացմանը:

1981թ. սեպտեմբերին Բենգազիում հավաքված ՏՀԱՃ-ի անդամ երկրների ղեկավարները Մերձավոր արևելքում աճող լարվածության ամբողջ մեղքը բարդեցին ԱՄՆ-ի և Իսրայելի վրա՝ նրանց կողքին չնշելով Եգիպտոսը[44]: Եգիպտա-արաբական հարաբերությունների բնականոնացման նոր շրջան է սկսվում 1981թ. հոկտեմբերին՝ Եգիպտոսի նախագահի պաշտոնը ստանձնած Մուբարաքի իշխանության շրջանում: 1981-1989թթ. Եգիպտոսին հաջողվեց վերադառնալ «արաբական ընտանիք»: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ արաբական աշխարհում Եգիպտոսի մեկուսացումը ընդհանրական չէր և չկրեց տևական բնույթ: Այն մասնակի էր: Հաշվի չառնելով եգիպտա-արաբական հարաբերությունների սառեցման հանգամանքը և այն, որ Եգիպտոսի անդամակցությունը դադարեցվել էր միջարաբական և միջիսլամական մի շարք կազմակերպություններում՝ արաբական մի խումբ երկրներ Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ շարունակում էին Սադաթի վարչակարգի հետ կապեր պահպանել: Ի տարբերություն քաղաքականի, Եգիպտոսի տնտեսական մեկուսացումն արաբական աշխարհում շատ ավելի թերի էր: Կահիրեն արաբական ֆինանսական աղբյուրները փոխարինեց արևմտյանով: Արաբական երկրները Եգիպտոսի մեկուսացմանն ուղղված պատժամիջոցները չէին տարածել եգիպտական ժողովրդի և, որ ավելի կարևոր է, արաբական աշխարհում ներգրավված եգիպտական աշխատուժի վրա: Պատժամիջոցները չէին տարածվել նաև Սուեզի ջրանցքի վրա: Համեմատաբար կարճ ժամանակաշրջանում Եգիպտոսին հաջողվեց վերացնել նաև քաղաքական մեկուսացումը, որը մի կողմից պայմանավորված էր արաբական Արևելքի երկրների զգալի մասում եգիպտական գործոնի ներկայության անհրաժեշտությամբ և, մյուս կողմից Մերձավոր ու Միջին արևելքում և, ընդհանրապես, «երրորդ աշխարհում» տարբեր քաղաքական անցուդարձերի նկատմամբ Կահիրեի գործուն քաղաքական կեցվածքով:

К ВОПРОСУ ОБ ИЗОЛЯЦИИ ЕГИПТА В АРАБСКОМ МИРЕ
(конец 1970-х – начало 1980-х годов)

ГЕВОРГЯН Г. Г.

Резюме

После подписания в 1978 г. президентом страны кэмпдевид-ских соглашений, а также в 1979 г. египетско-израильского мирного договора Египет

[44] Journal of Palestine Studies, vol XI, Nov. N 2, Winter, 1982, p. 192-193.

утратил роль лидера арабкого мира. Все арабские страны порвали с Египтом дипотношения, приняв ряд решений, обеспечивающих политический и экономический бойкот Каира. В частности, было заморожено членство Египта в Лиге арабских государств (ЛАГ) и в Организации исламской конференции (ОИК). Египет оказался в изоляции в арабском мире. Вследствие изменения ситуации на Ближнем Востоке, в частности с началом ирано-иракской войны произошел раскол бойкотирующих стран на насколько лагерей, а также возросло политическое значение Египта в обеспечении безопасности ряда арабских стран. Каиру де-факто удалось восстановить свое ,,присутствие" в арабском мире.

По большому счету изоляция Египта в арабском мире была неполной и непродолжительной. После прихода к власти в Египте Мухаммеда Хосни Мубарака в египетско-арабских отношениях наметилось сближение. Уже в течение 1981-1989 гг. Египет восстановил свое членство в ЛАГ и ОИК, а также дипломатические отношения с арабскими странами.